ՀՏԴ:929:72(479.25) Թորամանյան

Doi:10.54503/0135-0536-2025.1-276

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆ
(Ծննդյան 160-ամյակի առթիվ)*

Դժվար է պատկերացնել, որ դեռևս XX դարի սկզբին «հայկական ճարտարապետություն» ձևակերպում գոյություն չուներ, առավել ևս՝ վերջինիս ընկալումը որպես համաշխարհային մշակութային երևույթ: Այսօր դա անվիճելի փաստ է, և այդ գործընթացի նախահայրն է ազգային մշակույթի երախտավոր Թորոս Թորամանյանը՝ անվանի ճարտարապետ և ճարտարապետության խոշոր տեսաբան, որի ծննդյան 160 և մահվան 90-ամյակները լրացան վերջերս:



Թերթելով գիտնականի կոթողային աշխատությունը՝ «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության» երկհատորյակը (1942 թ., 1948 թ., Երևան), անմիջապես պարզ է դառնում ուսումնասիրության ընդգրկուն բնույթն ու գիտական խորությունը: Թերևս հենց այդ է պատճառը, որ Թորամանյանի՝ հայկական միջնադարյան ճարտարապետության հուշարձաններին և դրանց տեսական խնդիրներին նվիրված այս հրատարակությունը մասնագիտական շրջանակներում առ այսօր մնում է արդիական:

14 տարեկանում զրկվելով ծնողներից՝ երիտասարդ Թորոսը 1884 թ. լքում է իր ծննդավայրը՝ Շապին Գարահիսարը, և մեկնում Կոստանդնուպոլիս: Չնայած իր հարազատների դժկամությանը՝ նրան հաջողվում է ընդունվել Կայսերական գեղարվեստի վարժարանի ճարտարապետական բաժինը՝ ցուցաբերելով բարձր առաջադիմություն, իսկ 1893 թ. արժանանալով առաջին կարգի մրցանակի՝ հաջողությամբ ավարտել այն:

Զունենալով ոչ մի աջակցություն և ինքնուրույն հոգալով իր կարիքները՝ Թորամանյանն անմիջապես աշխատանքի է անցնում որպես պրակտիկ ճարտարապետ և ունենում հաջողություններ: Սկզբում՝ Կոստանդնուպոլսում, ապա նաև Բուլղարիայի տարբեր քաղաքներում (1894–1900 թթ.) նա նախագծում ու կառուցում է առանձնատներ հայ մեծահարուստների համար և մասնագիտական մեծ փորձ ձեռք բերում: Սակայն ապրելով հազարամյա մշակութային պատմություն ունեցող Կոստանդնուպոլսում՝ Թորամանյանն ավելի ու ավելի է հետաքրքրվում ճարտարապետության պատմության և տեսության հարցերով, որոնք շուտով նրան տանում են նախևառաջ՝ Եգիպտոս, ավելի ուշ՝ նաև Հռոմ ու Հունաստան, որտեղ ծանոթանում և ուսումնասիրում է համաշխարհային ճարտարապետության կոթողային հուշարձանները:

Թորամանյանի կենսագրության կարևոր էջերից է 1902 թ. այցելությունը Փարիզ, որտեղ լինելու հիմնական նպատակը կրթությունը շարունակելն էր:

---

* Ներկայացվել է 14. I. 2025 թ., ընդունվել է տպագրության 27. III. 2025 թ.:

Թեև երիտասարդ ճարտարապետին բախտ չի վիճակվում դառնալ ճարտարապետության բարձրագույն հաստատության պաշտոնական սան, բայց օգտվելով ազատ ունկնդրի կարգավիճակից՝ հաճախում է ոլորտի լավագույն մասնագետների՝ պրոֆեսորներ Օ. Շուազիի և Շ. Դիլի բաց դասախոսություններին: Սա ակադեմիական լավ հիմք է ապահովում Թորամանյանին: Օ. Շուազին ճանաչված ինժիներ և ճարտարապետության տեսաբան էր, իսկ Շ. Դիլը՝ եվրոպական բյուզանդագիտության հիմնադիրներից:

Փարիզում Թորամանյանը մտերմանում է պոլսաբնակ բանաստեղծ Կարապետ Բասմաճյանի հետ՝ աշխատակցելով «Բանաստեղծ» հանդեսում: Նպատակ ունենալով հանդեսի էջերում ներկայացնել հայկական միջնադարյան վիմագիր արձանագրությունները՝ նրանք մեկնում են Հայաստան, մասնավորապես՝ Անի (1903 թ.): Թորամանյանի համար սա բացառիկ առիթ է դառնում՝ բացահայտելու Անին և ընդգրկվելու Անիի հնագիտական արշավախմբի կազմում: Այս կապակցությամբ Թորամանյանը գրում է. «Ուխտեցի մնալ այստեղ ..., աշխատել, տքնել ... մեր մեծ ժողովրդի հանճարի չնաչխարհիկ բեկորները փլատակներու ... տակեն ազատել և ցույց տալ ամբողջ գիտական աշխարհին»[1]: Այս խոսքերը դարձնելով կարգախոս՝ Թորամանյանն ազնվորեն և անմնացորդ ծառայեց մասնագիտությանն ու հայրենիքին՝ անտեսելով ճակատագրի մատուցած դառը փորձությունները:

Ինչպես իր ուսումնառության տարիներին, այնպես էլ մասնագիտությամբ աշխատելու սկզբնական շրջանում Թորամանյանը մշտապես զուրկ էր նյութական միջոցներից՝ ապավինելով լոկ բարերարների բարեհաճությանը, որոնք միշտ չէ, որ առատաձեռն էին: Ինչպես հետո կվկայի նրա անբաժանելի գործընկեր, արևելագետ Նիկողայոս Մառը՝ Թորամանյանն Անիում անցկացրեց զրկանքներով լի ձմեռ՝ ապրելով թաց և ցուրտ սենյակում՝ օրերով սովի մատնված: Բայց կյանքն արդեն կոփել էր երիտասարդ գիտնականին, և նա մնաց աննկուն[2]:

Անիում Թորամանյանի հիմնական նպատակն էր ուսումնասիրել և մասնագիտական շրջանակներ ներմուծել հայկական միջնադարյան հուշարձանները: Ծանոթանալով Ն. Մառի հետ, վայելելով նրա գնահատանքն ու վստահությունը՝ գիտնականը հանձն առավ Անիի ճարտարապետական հուշարձանների չափագրությունը, գիտական ուսումնասիրությունը և լուսանկարումը (այն առավել գնահատելի է ժամանակի հեռավորությամբ), պատրաստեց Անիի կամրջի, Գագկաշենի, Բախտաղեկի և Հովվի եկեղեցիների, ինչպես նաև՝ հյուրատան ճակատի երփնադրվագ շարվածքի վերակազմությունների նախագծերը: Երկու գիտական մեծությունների՝ Ն. Մառի և Թ. Թորամանյանի բեղմնավոր համագործակցությունն ու մեկը մյուսին լրացնելու ունակությունը պատմական նշանակություն ունեցավ, որը լավագույնս բնութագրել է հնագետ, արևելագետ Հովսեփ Օրբելին՝ նշելով, որ Թորամանյանը հաճախ հիմնավորում էր Մառի պատմական հայացքները ճարտարապետության նյութերով[3]: Հիրավի, Թորամանյանը դարձավ Անիի գիտական խմբի անփոխարինելի անդամը և մեկն արշավախմբի վառ համաստեղությունից, որի կազմում էին Հ.

---

[1] *Թ. Թորամանյան. Զվարթնոց եկեղեցին.– «Մուրճ» (Թիֆլիս), № 5, 1905, էջ 188:*

[2] *Վ. Հարությունյան. Թորոս Թորամանյան, Երևան, 1959, էջ 32:*

[3] *Վ. Հարությունյան. նշվ. աշխ., էջ 17:*

Օրբելին, հնագետ Աշխարհբեկ Քալանթարը, լուսանկարիչ Արամ Վրույրը, իսկ ռուսական ակադեմիական շրջանակներից՝ Յակով Սմիռնովը, Նիկոլայ Օկունևը և Նիկոլայ Տոկարսկին:

Թորամանյանը, Անիի ուսումնասիրությունից բացի, շուտով նվիրվում է ընդհանուր հայկական ճարտարապետության հետազոտությանը: Ուսումնասիրելով մի շարք հուշարձաններ հնագույն դարաշրջաններից մինչև ուշ միջնադար՝ գիտնականը բացահայտում և ուրվագծում է հայ ճարտարապետության զարգացման հիմնական փուլերը, վեր հանում կոնստրուկտիվ և գեղարվեստական առանձնահատկությունները: Նա առաջին անգամ հայկական ճարտարապետությունը ներկայացնում է արևելաքրիստոնեական մշակույթի համատեքստում. ավելին՝ խոսում հայկական ճարտարապետության որոշ ավանդույթների Հայաստանից Բյուզանդիա տարածվելու մասին, որն իր ժամանակի համար հեղափոխական տեսակետ էր, բայցևայնպես իր զարգացումն ունեցավ XX դարի երկրորդ կեսի բյուզանդական ճարտարապետության այնպիսի խոշոր տեսաբանի աշխատություններում, ինչպիսին է Կիրիլ Մանգոն: Թորամանյանի տեսության դրական արդյունքները, հիրավի, պայմանավորված էին նրա գիտական մեթոդով և մասնագիտական շատ լայն տեսանկյունով:

Հայտնի է, որ Թ. Թորամանյանի հռչակը մեծամասամբ պայմանավորված է Զվարթնոցի տաճարի վերակազմության նախագծով: Անիի պեղումներին զուգահեռ՝ գիտնականը Էջմիածնից ստանում է Զվարթնոցի պեղումներին մասնակցելու հրավեր, որոնք ընթանում էին Խաչիկ վրդ. Դաղյանի ղեկավարությամբ: Սակայն այն, ինչի ականատեսը եղավ Թորամանյանը տեղում, սարսափեցրեց իրեն: Հակագիտական, եթե չասել, բարբարոսական եղանակով տարվող «պեղումները», որի ընթացքում կիրառվում էր մեծ բեկորների պայթեցում, չէր կարող չվրդովեցնել գիտնականին: Ընթացքում պարզ դարձավ, որ հնագիտությամբ տարված Դաղյանը նույն մեթոդով էր գործել նաև Գառնիում, Դվինում, Եղվարդում և այլ վայրերում[4]: Որպես պրոֆեսիոնալ՝ Թորամանյանը չէր կարող այս մասին չբարձրաձայնել, սակայն նրա կողմից արված դիտողություններն ու քննադատությունը շատ սուր ընդունվեցին Էջմիածնի միաբանների կողմից, որն էլ պատճառ դարձավ նրանց միջև հակամարտության: Միակ հոգևորականը, որին Թորամանյանը խորապես հարգում և վստահում էր, Գարեգին Հովսեփյանն էր, ում հետ ակտիվ նամակագրական կապ ուներ, կիսվում մտքերով և հաճախ նյութեր խնդրում իր ուսումնասիրությունների համար[5]: Զվարթնոցի հնագիտական աշխատանքներին Թորամանյանի ընդգրկվելը, հիրավի, փրկեց հռչակավոր հուշարձանը, իսկ տաճարին նվիրված գիտնականի ուսումնասիրությունն ի ցույց դրեց մասնագիտական հանրությանը վերջինիս գեղարվեստական, ճարտարապետական և քանդակային բարձր արվեստը, որի համար մշտապես երախտապարտ ենք մեծ ճարտարապետին:

---

[4] *Թ. Թ ո ր ա մ ա ն յ ա ն. Նյութեր հայ ճարտարապետության պատմության, հ. 2, Երևան, 1948, էջ 287:*

[5] *Ա. Ա դ ա մ յ ա ն. Ճարտարապետ Թորոս Թորամանյանի անտիպ նամակները. – Հայկական ՍՍՌ Ն.Գ.Մ. արխիվային վարչության «Գիտա. Ինֆորմացիոն բյուլետեն», 1961, № 1, էջ 22–33:*

Զվարթնոցում աշխատելու ընթացքում Թորամանյանը նախ կազմեց ինչպես բուն տաճարի, այնպես էլ կաթողիկոսական պալատի հատակագիծը, ապա նաև նախաձեռնեց եկեղեցու վերակազմությունը, որը մասնագետների համար ընդունելի և արդիական է մինչև այսօր՝ չնայած հետագայում առաջարկված այլ տարբերակներին (Ստ. Մնացականյան, Տ. Մարության): Սակայն Զվարթնոցի տաճարի Թորամանյանի վերակազմությունն իր ժամանակին չընդունվեց Էջմիածնի միաբանների կողմից: Ավելին՝ նրանք և, մասնավորապես, Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանը սկսեցին վարկաբեկել Թորամանյանին՝ հատկապես Զվարթնոցի եռահարկության համար, ինչը, նրանց կարծիքով, մտացածին էր: Հենց նույն ընթացքում տեղի ունեցավ անհավանականը. 1905–1906 թթ. Անիում բացվեցին Գագկաշեն եկեղեցու (ս. Գրիգոր, 1001 թ.) հիմքերը, և, որ ամենակարևորն է, ի հայտ եկավ Գագիկ թագավորի արձանը՝ Զվարթնոցը կրկնող Գագկաշենի եռահարկ մոդելը ձեռքին: Դա ոչ միայն անձնական, այլև գիտական մեծ հաղթանակ էր և հաստատումը Թորամանյանի մասնագիտական խոր գիտելիքների:



Զվարթնոց տաճարի վերակազմությունն ըստ Թորոս Թորամանյանի, 1960 թ.:

Զվարթնոցից բացի՝ Թորամանյանը իրականացրեց Ավանի տաճարի առաջին վերակազմությունը՝ նշելով հուշարձանում հինգ գմբեթների առկայությունը, որն եզակի էր հայկական ճարտարապետության համատեքստում, բայց կամրջվում էր վաղմիջնադարյան կոստանդնուպոլսյան ավանդույթների և, մասնավորապես, ս. Սոֆիայի հետ: Թորամանյանն առաջինն էր, որ կռահեց Դվինի մայր տաճարի կողմնային խորանների հետագայում հավելված լինելը և արեց մի շարք կարևոր դիտարկումներ՝ հեշտացնելով այդ բազմաշերտ կառույցի հետագա ուսումնասիրությունը:

Խոր գիտակցելով հայկական ճարտարապետության և մշակույթի հանրահռչակման անհրաժեշտությունը՝ Թորամանյանը, իր հետազոտություններին զուգահեռ, սկսում է հանդես գալ զեկույցներով և ակտիվորեն տպագրվել պարբերական մամուլում («Յուշարար», «Մուրճ», «Ազգագրական հանդես» և այլն): 1905 թ. «Զվարթնոցի եկեղեցին» գիտական հրապարակումով Թորամանյանը նաև հիմք դրեց մայրենի լեզվով մասնագիտական գրականության տպագրությանը: Այս հոդվածին հետևեցին «Էջմիածնի տաճարը» (1909 թ.), «Գավիթ և ժամատուն հայոց հնագույն եկեղեցիների մեջ» (1911 թ.), «Անի քաղա՞ք թե ամրոց» (1912 թ.), «Նորագույն կարծիքներ հայ ճարտարապետության մասին» (1913 թ.) և այլ ուսումնասիրություններ: Սակայն Թորամանյանի մշտական ձգտումն էր հրատարակել ընդգրկուն տեսական աշխատություն, որը չիրականացավ միջոցների բացակայության պատճառով: Միայն առանձին հանգանակությունների շնորհիվ լույս տեսան փոքր գրքույկներ, ինչպիսին, օրինակ, «Տեկորի տաճարը» (1911 թ., Թիֆլիս):

Ն. Մառի միջնորդությամբ Թորամանյանը 1910 թ. ընդգրկվեց նաև ռուսական գիտական շրջանակներին՝ տպագրելով «Էջմիածնի տաճարը» ուսումնա-

սիրությունը. միակը, որ թարգմանվեց ռուսերեն և մեծ հավանության արժանացավ քրիստոնեական հնությունների մեծ գիտակ Նիկոդիմ Կոնդակովի կողմից: Շուտով Թորամանյանի գիտական մոտեցումներն արձագանք գտան նաև եվրոպական ակադեմիական միջավայրում՝ սկիզբ դնելով գիտնականի կենսագրության դրամատիկ էջերին:

Թորամանյանով և նրա տեսությամբ հետաքրքրվում էին սկզբում գերմանացի գիտնականները, բայց ուղիղ շփումների մասին գրեթե տեղեկություններ չկան: Խոսուն է այն փաստը, որ հայկական հուշարձանների նկատմամբ մեծացող հետաքրքրությունն առիթ է դառնում Բեռլինի համալսարանում հայկական ճարտարապետության ուսումնասիրության ամբիոնի բացման, որտեղ, հավանաբար, մեծ դեր է ունեցել նույն համալսարանի դասախոս Բագրատ Խալաթյանը[6]: 1913 թ. գարնանը Թորամանյանին հաջողվում է մեկնել Վիեննա՝ արվեստի պատմության ինստիտուտի գիտական քննարկմանը մասնակցելու և կարդալու հայ ճարտարապետությանը նվիրված իր զեկուցումը: Այստեղ նա մոտիկից ծանոթացավ Վիեննայի համալսարանի պրոֆեսոր Յոզեֆ Ստրժիգովսկու հետ, որի գիտական հայացքներին ծանոթ էր Էջմիածնի ավետարանի մանրանկարներին նվիրված վերջինիս հոդվածի շնորհիվ: Վիեննայից Բրուտոսին գրած իր նամակում Թորամանյանը, ամփոփելով իր այցելությունը, նշում է հետևյալը. « ... կարող եմ ասել, որ հայ ճարտարապետությունը վերջնականապես մտավ եվրոպական գիտության մեջ, պատվավոր տեղ ունեցող բոլոր ազգերու ճարտարապետության շարքը ... »[7]:

1913 թ. սեպտեմբերին պրոֆեսոր Յո. Ստրժիգովսկու ղեկավարած գիտական խումբը ժամանեց Հայաստան: Համագործակցությունը Թորամանյանի հետ ընթացավ շատ արդյունավետ և խոստումնալից. ծնվեց համատեղ աշխատություն ստեղծելու գաղափարը: Այդ նպատակով Թորամանյանը որոշ ժամանակ հետո կրկին մեկնեց Վիեննա՝ իր հետ տանելով երկար տարիների աշխատանքի արդյունքում ստեղծած գիտական նյութերն ու գծագրերը: Սակայն Առաջին համաշխարհային պատերազմի արհավիրքները ստիպեցին Թորամանյանին շուտափույթ վերադառնալ հայրենիք, որից հետո նա այլևս չկարողացավ գնալ Եվրոպա, և Ստրժիգովսկու հետ կապն այդպիսով ընդհատվեց: Շուտով Թորամանյանը մեծ ցավով և հիասթափությամբ տեղեկացավ, որ լույս է տեսել «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» (1918 թ.)[8] երկհատոր ծավալուն աշխատությունը, որի հեղինակն էր Յո. Ստրժիգովսկին: Չնայած այն բանին, որ ավստրիացի պրոֆեսորը մեծ ակնածանքով է խոսում նրա աջակցության և անձի մասին, բայցևայնպես գիտական աշխարհում այդ աշխատանքը[9], որի գիտական հենքը, տեսակետների զգալի մասը և գծագրերը Թորամանյանինն էին, մեկընդմիշտ կապվեց Ստրժիգովսկու անվան հետ: Տա-

---

[6] Ա տ ր պ ե տ. Խորթ և հարազատ.– «Ախուրեան» (Ալեքսանդրապոլ), 1908, № 85:

[7] Ն. Թ ո ր ա մ ա ն յ ա ն. Թորոս Թորամանյան. Նամակներ, Երևան, 1968, էջ 13:

[8] J. S t r z y g o w s k i. Die Baukunst der Armenier und Europa, Vol. 1–2. Wien, 1918.

[9] Աշխատանքն ուներ այլ, հայկական ճարտարապետության հետ չառնչվող խոցելի կողմ՝ արիական ռասայի տեսության գաղափար, որը հետագայում քննադատության արժանացավ եվրոպական գիտական շրջանակներում, բայց դա չէր վերաբերում Թորամանյանի գծագրերին և չափագրումներին:

րիներ անց միայն Հայաստանի կառավարության կողմից վարած բանակցությունների արդյունքում այդ նյութերի միայն մի մասը հնարավոր եղավ վերադարձնել: Հետագայում դրանց գումարվեցին Թ. Թորամանյանի Հայաստանում եղած արխիվային նյութերը, որոնք 1999 թ. գիտնականի ընտանիքը փոխանցեց այն ժամանակ ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչությանը:

Թորոս Թորամանյանը և Յոզեֆ Ստրժիգովսկին Գառնիի ավերակների մոտ, 1913 թ.:

1918 թ. այլ ծանր հարվածներ հասցրեց գիտնականին: Քաղաքացիական կռիվների և թուրքերի հարձակման հետևանքով Անիի հնագիտական արշավախմբի նյութերի հիմնական մասը Թիֆլիսից Պետերբուրգ տեղափոխելու ճանապարհին անհայտացավ (միայն չնչին մասը փրկվեց Ա. Քալանթարի ջանքերով): Նույն հանգամանքները ստիպեցին շատերին, այդ թվում՝ Թորամանյանին, փրկվելու նպատակով շուտափույթ լքել Ալեքսանդրապոլը, որտեղ նա ստիպված եղավ թողնել արկղներում հավաքած իր մեծարժեք գիտական արխիվի մյուս մասը[10]: Տարիներ հետո արդեն վատառողջ և ձեռքի տակ ունենալով իր մեծ աշխատանքի մի համեստ հատվածը միայն՝ Թորամանյանը փորձեց ամբողջացնել տարիների իր հետազոտությունները: Ի սկզբանե նախատեսված էր պատրաստել «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության» կոթողային աշխատության երեք հատորը, և այդ աշխատանքները ջանասիրությամբ կատարում էր Թորամանյանի աշակերտ ու կրտսեր գործընկեր Միքայել Մազմանյանը: Սակայն 1937 թ. վերջինս ձերբակալվում և աքսորվում է, որի պատճառով գործը մնում է անավարտ[11]: Եվ միայն գիտնականի մահից հետո լույս տեսան այդ երկու հատորները, որոնք տպագրության պատրաստեց ճարտարապետ Կարո Ղաֆադարյանը:

Թ. Թորամանյանի գործառույթները չէին սահմանափակվում միայն հուշարձանների ուսումնասիրությամբ: 1923 թ. Ա. Թամանյանի և Մ. Սարյանի հետ նա նախաձեռնում է հնությունների պահպանության կոմիտեի ստեղծումը: Թորամանյանը Հայաստանի պատմության թանգարանի ճարտարապետության բաժնի հիմնադիրն ու առաջին վարիչն էր (1930–1934 թթ.) և կատա-

---

[10] *Այդ մասին տե՛ս Ա. Ղ ա զ ի յ ա ն. Ճարտարապետ Թ. Թորամանյանի դիմումը Առաջին համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասները քննող հանձնաժողովին՝ 1918 թ. ապրիլին թուրքական արշավանքի հետևանքով իր կրած կորուստների վերաբերյալ.– ՊԲՀ, 1999, № 2–3, էջ 388–396:*

[11] *Լ. Տ ե ր-Մ ի ն ա ս յ ա ն. Թորոս Թորամանյան, Միքայել Մազմանյան. Անիի պեղումներից մինչև Թորամանյանի գիտական ժառանգության հանրահռչակում. – Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի, 2024, № 2, էջ 134–135:*

րել էր շատ հուշարձանների թանգարանային առաջին նկարագրություններ, իսկ թանգարանի պահոցը համալրեր 12.000 լուսապակի նեգատիվներով: Թորամանյանը նաև Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի գիտաշխատող էր՝ վայելելով իր գործընկերների հարգանքն ու ակնածանքը:

1934 թ. փետրվարին, երբ հանդիսավորությամբ նշվում էր Թ. Թորամանյանի գիտական գործունեության 30-ամյակը, գիտնականը վատառողջ էր և անկարող ներկա գտնվել հանդիսությանը, իսկ մարտի 1-ին՝ 70 տարեկան հասակում, նա կնքեց իր մահկանացուն:

Հիրավի, Թ. Թորամանյանի գիտական գործունեությունը բախտորոշ եղավ հայ մշակույթի և ճարտարապետության գիտական ուսումնասիրության համար: Ի սկզբանե հիմնվելով իր բնատուր մեծ տաղանդի և ճեռք բերած մասնագիտական գիտելիքների վրա՝ նա կարողացավ դնել շատ բարձր գիտական նշաձող, համարձակորեն առաջ քաշել նոր և հիմնավոր տեսակետներ: Գիտնականը տվել է իր ապարեզի այնպիսի մասնագիտական ձևակերպումներ, որոնք մինչև մեր օրերը, անկախ մի շարք անճշտություններից և վրիպակներից, անգերազանցելի և ուղեցույց են նոր սերնդի մասնագետների համար:

ԶԱՐՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆ

Արվ. թ., ԵՊՀ հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ միջնադարյան արվեստ, հայ-բյուզանդական, հայ-վրացական միջնադարյան կապեր: Հեղինակ է 3 մենագրության և 80-ից ավելի հոդվածի: ORCID:0000-0002-0359-3089. hakobyanzaruhy@ysu.am